

սակաւ եւ ջուրն անձրելի, տներն ամէն վի-
մաց, եւ գնող. միան ելիւրու քսան դրամ,
220 նոյնպէս հաւն: Եւ բնաւ ջուր չեն ըմպել,
այլ գինի. եւ քաղցր ջուրն այլ տեղաց կէմովք
բերեն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւ ասին թէ Իմ համալ կայ, ԽՈՒ փէրէ-
մա, ԽՈՒ քօբբու, ԽՈՒ բող, ԺՂՈՒ կարգաւոր,
225 ՅԿԵ մեծ եկեղեցիք մարմարէ՝ արանց եւ
կանանց, սրխտալովք: Պաղչանի եւ դար-
պասնի, այլ եւ բաղում օթեւանք հիւրոց,
հիւանդաց, հազմանոց, որ վասն սիրոյն
Քրիստոսի գեղ տան տկարացն: Եւ դայս ոչ
230 եթէ ի ուամիկ մարդկաց լուաք կամ ոչինչ,
այլ ի անուանի եւ տօլլաթաւոր տեղացոցն:
Եւ չէ զարմանք, զի սահմանք է Ֆռանկաց
ամենայն ինչ ի տէՔղարն անցնել. եւ ոչ թէ
միայն զմեծ բան, այլ եւ գոչինչն: Այլ եւ ա-
235 լին թէ օրն ԲՈՒ զուռուչի սավրղ կու ծախվի
եւ ԲՈՒ ձուկն, նոյնպէս եւ զայլսն իմասցիս:

ԿՈՒՍԱՍՍԱՆ

Եւ այնպէս հարուստ բողեր կան, որ մէկ
բող մի շինել է վանք մի երկու միլ հեռի ի քա-
ղաքէն, զուտր մերմէրէ ի մէջ ծովուն, այս-
240 պիտի կերպիւ. զի զղջացեալ նա ի մեղաց եւ
ի չար գործոց, շինեաց զվանս եւ ժողովեաց
զկոյս աղջկունս եւ նոքօք մտաւ յինքն՝ ծա-